ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2014 թվականի N 311-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 –րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի «բ» ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Երկրապագահ կամավորականների միության Կոտայքի տարածքային բաժանմունքի նախագահ՝ Սուրիկ Աղոյանի 2014 թվականի հուլիսի 10-ի թիվ ԵԿ-1 109 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Հայաստանի Հանարապետության Երկրապահ կամավորականների միության Կոտայքի տարածքային բաժանմունքին հատկացնել 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Գումարը դուրս գրել Հայաստանի Հանրապետության Երկրապահ կամավորականների միության Կոտայքի տարածքային բաժանմունքի նախագահ՝ Սուրիկ Աղոյանի անունով:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մազպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի հուլիսի 21
ք. Հրազդան

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզպետի
2014 թվականի հուլիսի 21-ի N 311-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Սուրիկ Աղոյան	Աբովյան քաղաք Բարեկամություն փողոց N 1	70 000	